Ծուշանիկ Կուրղինյան

Իմ երգը

Ես ծնվել եմ մութ խրճիթում մշտաթաց,
Աղքատ կյանքի խոպանացած հովիտում,
Ուր գրկանքը մանուկ օրից գրկաբաց
Թույլ մարմինս իր կրծքին էր օրորում:

Կյանքի լույս չկար այնտեղ գեթ նշույլ՝
Միշտ խավար էր . . . տառապանքի ցուրտ ձմեռ,
Ուր գալարվում, խարխափում էր սիրո թույլ,
Դալուկ կայծեր նույնպես աղքատ կիսամեռ:

Սակայն հզոր է հավատն իմ սրտում,
Սև օրերի սալին կոփված այն հավատ,
Որ թշվառին միշտ դրախտ է խոստանում,
Ու դարմանում խոր վերքերը անփարատ:

Ահա շողաց . . . օ՛, շողշողաց իմ մտքին
Վեհ, գիտակից կյանքի լույսից մի ջինջ շող՝
Հոգիս թնդաց, միտքս փարվեց խնդագին
Իդեալների վեհ բարձունքին լուսացող:

Բայց մի ջինջ շող . . . օ՛, այդ քիչ է, պարոննե՛ր,
Քիչ է, քիչ է ծարավ-ծկակ իմ հոգուն .
Տվեք ծծեմ սրտիս հյութով հույս-լույսեր՝

Մտքով կույր եմ, խեղճ ու մոլոր աշխարհում:

1905